

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ի. — Ի ՑԱՐՈՒԹԻՒՆԻ ԴԱԶԱՐԱՒԻ

Երանելոյն Թէռփիլեայ ազացեալ ի Յարութիւնն Պազարու չուեխօեայ, եւ ի Տուն ի Մարիամ եւ ի Մարքա, եւ ի Դալուսն Արդյոյն Ասուծոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այր աստ զհրէիցն խաւարեալ սիրու նշանակէ, եւ վէմ գծանրագոյն ի վերաց գանհաւատութիւն նոցա, վասն օրոյ ցնոսա հրամայեալ ասէք. Ի բաց արարէք զիշմէ գծանրութիւն բեռին գժուարակիրն օրինաց, զի պինարար շնորհացա առջիք զրան; Ի բաց արարէք զիշմէ, զի գարշահոտութիւն¹⁴ նեխնալ մնուելոյդ կալցէ զիստաւելին ձեր: Դուք, ասէ, բարձէք ի բաց, եւ ոչ աշակերտորդ իմ. զի զութ լինիք վկայը եւ ոչ դարայ. զի մի՛ ասիցէք, որպէս վասն կուրին ասէիք, եթէ սա ոչ է նա ամ նման է նմա:

Ասէ ցնու Մարթայ՝ բայր մեռելոյն. Տէր, արդ հոտեալ ի, բանիք յորեքրօրեալ է: Դարձեալ անհաւատութեան եւ երկպառակութեան է բանս, զի ի մեծամեծ սրանցելիսն անհաւատութեանն ախտ տեղի գտանել առվորք, եւ վկայ Քրիստոսի ասելն. Մյջ ասացք թեզ, ասէ, եթէ հաւատացեն՝ տեսցև զիմասն Աստուծոյ: Այսու զթերակատար հաւատոյ նորա զեկուցանէ, զի չեւ եւս ազատեալ գուով յերպայական ախտէն, եւ վասն այնորիկ սխալականն¹⁵ առնէք զպատասխանին: Խակ Յիսուս զաշն ի վեր ամբառնալով ասէ. Հայր, գոհանամ զբէն, զի լոււար ինձ, եւ ես զիտէի զի հանապազ լսես ինձ, այլ վասն ժողովրդեանս, որ զուրք կան, առնեմ, զի հաւատացեն եթէ զու առաքեցեր զիս:

Լսելով զայս, ով՛ սիրելի, մի՛ յերկուանար նուաստագոյն իմն համարեալ զմարմինն բան զրանն, այլ հաւատար եւ ճարթ. բանիք ուստի խոնարհեալ էջ՝ անդ հայեցաւ, ծգելով զրանն առ Հայր՝ համակամութիւն ցուցանելով նմա: Նա եւ յաղագ հրէիցն տնօրինեալ ցուցանէք զայն առ ի հաւատալ նոցա՝ թէ Ռորի էր (յ)Աստուծոյ, եւ Աստուած եկեալ ի վերուստ, եւ ոչ Աստուած հակատակ Աստուծոյ, որպէս կարծեալ ասէին.

Եւ զի ստուգապէս մարդ լիայ՝ մարդկարար խօսելով հոյէք ի վեր, զի մի՛ առ աչօր կարծեցն զնշմարիտն մարմնաւորութիւն. եւ զարձեալ աչ ասաց՝ լուր ծայնի ի մում, այլ թէ լոււար. որով ստուգապէս զիտէ, զի իրեւ զիստաւած կարող էր. նա եւ զի Հայր անդ էր աստուածութեամբ՝ միակամ, եւ մի խորհուրդ զիւրն եւ¹⁶ զլօրն ցուցանէք:

Եւ զայս իրեւ ասաց, ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ. Պազարէ: Եկ արտաք: Եւ իսկոյն ել(եալ) մեռեալն¹⁷ ոտիւք կապելովք, եւ ձեռօրն երիզապնդօք, եւ երեսօրն վարշամակապատօք:

Արդ՝ որ որ յաղօթելն երկրայացաւ, աստ ստոյդ Թաստատեցի, զի ոչ մաղթեաց եթէ յարոյ(յշ) զնա Հայր. այլ տիրարար ծայնեալ՝ նկ արտաքսէ: Թագաւորական էր ձայնն, եւ տիրական, նա թէ՝ եւ աստուածականն¹⁸ իսկ:

Ձայնն մարդոյ լսիւր, եւ գործն Աստուծոյ տեսանիւր:

Զայն եւ լուր ի մի թերանոյ, եւ նոյն մարդոյ եւ¹⁹ Աստուծոյ: Զի որպէս ծայնն այն յերկուս ծայնս ոչ բաժանի երբէք եւ ոչ նանակի, այնպէս եւ ոչ աստուածութիւնն

¹⁴ զի գարշահոտելիս ձեր ի ու սիրականս ի ու զունի և ք ու կոկ ձայնեաց ի գերեզմանն զարշառու առա ի ձագն մեծ եւատէ. Հազարէ, արի եկ արտաքս: Եւ իսկոյն ել մեռեակի և զունի Արդ ... եկ արտաքս և աստուածարար ի և ու զունի և ի և

եւ մարդկութիւնն բաժանեալ ճանալին ի միմեանց: Զայնէր որպէս զմարդ եւ յարուգ ցանէր իրեւ վեստուած:

Զայն յականչը լսողացն մարդոյ, եւ գործն ի խորս ասնդպարամետականացն՝ Առ տուծոյ. որպէս ոչ լուր ծայնին եւ գործք արդեանցն բաժանին, այնպէս եւ ոչ աստուածութիւնն եւ մարդկութիւնն: Զայրքառ ծայնին և մարդոյ լուսն հրէայրն եւ ոչ հաւատացին, եւ զնոյն ծայնն Աստուծոյ համարելով՝ ի զփոխն զնոյին Ղագարոսի ոչ արգելին:

Զայն մարդոյ լսելով աշակերտացն, և ձայնին այնու զիտաեալն եւ զագական-
եալն յարուցանէր, որպէս զարհութեալ ատէին. նթէ մարդ է և իրեւ Աստուած գործն
կաց: Եւ զնայն ի դժոխս լսելով հիացան, ճանաչելով թէ Աստուած է, և իրեւ
մարդ ձայնեաց: Յառաջագոյն զնայնն մարդոյ լուան Մարիամ եւ Մարիամ, և զգործն
յարութեան լորեթօրէին տեսանելով սրանչացան յոյժ:

Զայն մարդոյ լու ան գիրեզմանն եւ զժոխքն, եւ իբր ծայնին Աստուծոյ զժոխքն⁴⁴ զիողին⁵¹ մարմնոյն ընճայեաց, եւ զերեզմանն զմարմինն կենդանին առաջի ծայնողին կանգնեաց, որ ծայնէք՝ ինքն⁵² մարդ երեւէք, եւ ծայնին նորս չորեքօրեայն յառնէք, զի Աստուծած էք եւ Տէք: Քանզի աստուծային ընութիւնն ընդ մարդկութեանն միաւորելով գործէք զայս: զբաժանեալ հոգին ի մարմնոյն ի մի միաւորելով շնորհէք քերցեւ:

Էր ի Բնեթանիայ եւ ճայնէր Ղազարու ի գերեզմանն, եւ նոյն ճայն ի դժոխա արտակող լինէր հոգուոյն, զոր ի լսեն սասանէին անդունդը: Կրկնեցից գրան, զի սրբաւշիլք է խորհուրդս: Էր յերկինս եւ ի ծոց Հօր, եւ ի յերկրի զնա Մարթայ և Ամարիամ տեսանէին, եւ շրջէր յերկրի մարդաքար⁵⁹, եւ յերկինս Գարբիէլ Եւ Միքայէլ նկատել ի նա ոչ զօրէին. Էր ի գերեզմանն Ղազարու, եւ յերկնից ոչ էր պակաս ամեննեին. եւ սր յերկինս էր՝ նոյն եւ ի գերեզմանն բոլորովին. որ աստ ի Բնեթանիաց՝ նոյն եւ ի գժոխս հոգոյն⁶⁰ ազատումն, առնէր, եւ դարձեալ աստ զորով՝ զմարմինն յարուցանէր. անդ առմաննեալս արծակէր, եւ աստ զապականնեալն նորոգէր⁶¹:

Ակ սբանէինացս, յերկինն էք եւ ի նմանէ հրդատակքն զարհութիւնն, նոյն եւ ի դժոխն եւ սանդարամետքն ի նմանէ զողայինն. նոյն ի Բեղանիա զարձեալ մարդ տեսանիր. եւ յերեւեալ մարդոյ անտել (յ)երկինքն զողայինն, զժոխքն սասանէինը^{աշ}, մահն հաւածիւր, հոտեան նորոգիւր, գերեզմանն, զոր մեռեալ առ, կենդանի հասուցանէք:

Ամենայն տարիքը այսորիկ այսպէս հպատակէին, եւ իրէայթն զգործողն այսօ
ամենայնի իրբեւ այր մի լոկ սպանանել խորհէին, գոր յիտ^{ու} սպանանելոյն հեթանոսք
զմեռեալն կատարեալ Աստուած խոստովանէին: Ով ճրաշից սրանչնի, որ յնազար^{ու}
կատարեցան: Լուա մեծատուան ի նահապեան Արքանամու թէ չգոյ ինչ նար ումեց
անցանել աստի այդր, քանզի զինս մեծ է, որ ի միջի մերում է, եւ նա ինքն զինն
զայն մեծ եւ զանբաւ՝ որպէս սակաւ ինչ եւ զնուբը միջօց՝ զիւրաբայլ համարցաւ:
Վասնից մի ճայն միայն մարդացելոյնն Աստուած: զմեռեալ մարմինն կննդանացոյց,
եւ զինդանացեալն ի նմա զորդունան մահացոյց, զնիսեալն նորոգեաց եւ զնուեալն
մարդեաց, զապակնեալն վերստիկ ատեղձեաց, որով խսկոյն յարկաւ պատեալն ոտիւք
կապեւուր եւ ծեռօքն երիզապիդոր:

Այս վասն անհաւատոթեան հրէիցն գործեցաւ. զի թէ զանդամն նորա ինք նաև ոչ էին պնդեալ պատանօթ, զերևն վարշամակապատօթ, ի դէպ էր առել նոցա թէ ոչ մեռաւ նա, այլ՝ այլ ինչ նմանութիւն մնուելոց կերպարանաւ եւեխ եղաւ ի գեր բնզմաննց, բայց ի գալ նորա արտաքս՝ ստուգեալոց ծանեան զի նա ինքն Դաշտառ էր, որ նոցին ծնութիւն պատեալ եղաւ ի գերեզմանին անդ, եւ ծայլին եկեալ այն ինչ առ

" Զանիք ձայնին է " Զանիք Ձայն մարդու ... " զանկացան յայտն է " Զանիք բժիշկին է
Դ Զանիք պատճենին է " Զանիք ինքնին է " մարդկաբարի " հոգուն է Ա Զանիք բանցի ...
Դ Զանիք պատճենին է " Զանիք ինքնին է " մարդկաբարի " հոգուն է Ա Զանիք բանցի ...
Դ Զանիք պատճենին է " Զանիք պատճեն է " ի շատաց է " մարդկացան է " ի շերեզմանին է
Կ Զանիք պատճենին է " Զանիք պատճեն է " ի շատաց է " մարդկացան է " ի շերեզմանին է
Վ սուսացին է

նա մարդաբար՝ դժոխքն զհոգին արծակեալ, զերեզմանն զմարմինն ետ կենդանի Մարդաբար եւ Մարթայ յարութեամբ եղբօրն ուրախացան, դժոխոցն իշխանը⁶⁹ խռովեցան, մեռելոցն⁷⁰ հոգիքն, որպէս ի քնոյ զարթուցեալք, եւ թերկրելով ցմիմեանս⁷¹ ասէին. զի՞նէ է ծայնս, որ զդժոխս խռովեցոյց, զմեռեայն⁷² կենդանացոյց, եւ զամինեսեան զմեզ զարթոյց: Որով թէպէտ եւ բանտապիտք խռովեցան, այլ աստ ի միջի մերում յանձնոյլ աղջամզջի՝ որպէս լոյս ծառ ալեցաւ կարօտեցոց յոյժ տեսութեան լուսոյն:

Եւ ո՞յր է ասեն ծայնս այս, կամ ո՞ւմ ծայն զօրէ այսպէս զօրաւոր լինել. ծանեաբ զի ծայնն մարդոյ իսկ էր. եւ հիանամբ թէ զիա՞րդ բարրառ մարդոյ զօրէ ի խորս զժոխոց լսելի լինել, կամ զիա՞րդ լսելի լինելով՝ այսպիսի լուսով պայծառականայ, մինչ զի շառաւիզս արծակէ ի մէջ խաւարի այս աղջամզջին:

Զայս ամնայն խօսելով ցիրեարս⁷³ ժողովեցան առ նախահայրն իւրեանց եւ ասեն. Ով Ադամ, լուսա՞ր երբեք այսպիսի ծայն:

Լուսայ, ասէ, մինչ ի դրախտին էի, զի ծայնեաց. Աղամ, ո՞ւր ես, այլ մարմին ոչ ունէր որ խօսեցաւն, որոյ եւ ծայնն որպէս սպառնալիս տանզանաց երկեցոյց զիս: Չայնս այս այնմ նմանեցաւ⁷⁴, այլ այս իրը աեւտիս(ս) ազատութեան ի կապանաց աստի, ուրախացայց զիս յոյժ եւ զծեզ. զի ծայնս այս ի խաւարի աստ լուսաւորեաց, եւ ոչ ի խաւար աղջամզջին խորեաց. զաչս իմ երաց լուսով եւ ոչ մթացոյց միգով, զուարթացոյց զիս լուսով եւ ոչ տրտմեցոյց ոգուով⁷⁵:

Ասեն ցնա հոգիքն. մի՞թէ ապա կրկին ծայնեաց քեզ: Զայն, ասէ, լուսայ բայց Ադամ ոչ լուսայ այլ Ղազարոս: Ասեն նորա. եւ ո՞վ է Ղազարոսն այն⁷⁶: Ասէ նա. ուն մի եկեալ եղիս զիս աստ եւ ասէ. ով նախահայր իմ, տեսի անդ⁷⁷ ունն կ կու սէ ծնեալ, զոր որդի Ադամայ ասէին: Եւ նա զրորոս սրբէր, զանդամալոյծս կանզնէր, զկոյրս լուսաւորէր, զմեռեալս յարուցանէր, եւ մեծամեծ սրանչելիս գործէր թէթ նա, որպէս⁷⁸ լուսայ, որդի բոլ իցէ, յորժամ խնդիր արասցէ քեզ, զիտեմ զի կարող է փրկի զրեզ⁷⁹ ի խորոց տատի գժոխոցս, թերբեւ եւ ոչ զիս անտես արասցէ, վասնզի բարեկամ իւր անուանէր⁸⁰ զիս եւ սիրէր յոյժ⁸⁰: Յանկարծակի ծայն իմն ահաւոր հնչեալ՝ այսր⁸¹ յափշտակեաց զնս, եւ ահա⁸² այժմ ոչ է աստ.

Ի խօսեն զայս Ադամայ ցնոսա, ահա⁸³ դժոխսապետն փութալով ի զերեզմանն հարցանէր, ո՞ւր է Ղազարոս: Ասէ ցնա զերեզմանն. զինէ խօսիս, ես զսովորական գործն իմ կատարեցի ի մարմին նորա առ ի ննին եւ յապականեի:

Դժոխսապետն ասէ. Եւ արդ ո՞ւր է նեխեալն եւ ապականեալն: Գերեզմանն ասէ. բեր այսր զիոգի նորա եւ ես վաղվաղակի զմարմինն տաց: Դժոխսապետն ասէ. ծայն իմն վանեալ զիս՝ յափշտակեաց զիոգի նորա յինէն, որոյ թէ հնար էր հոգոյն մեռանել⁸⁴ եւ ապականի՝ ոչ էր ապատեալ⁸⁵ ի ծեռաց իմոց:

Ասէ գերեզմանն. յորժամ գու զանթնականն գործելով զգոյացեալ հոգին թուլացուցեր մտանել ի ստեղծական մարմինն, ես նոյնպէս⁸⁶ զանակնունելին⁸⁷ յինէն կատարեցի⁸⁸: Յորժամ մեռեալ եւ նեխեալ մարմինն առ իս հոգով⁸⁹ կենդանացաւ՝ չկարացի ըմրոնող լինել եւ արգելել. այլ արծակեցի⁹⁰ փութանակի: Զի ծայնն⁹¹ այն, որ այնպէս հնուագոյն գործի, կարսց ի խորս անզընդոց զիոգի նորա ի բէն յափշտակել՝ զստեղծեալն յինէն եւ զեղեալն յիս զիա՞րդ⁹² ոչ կորզէր, որ մերձ եւ հուսա գորով դրանս իմ ծայնէր նմա:

⁶⁹ գժոխոց իւրահանքն է. ⁷⁰ մեռելոց է. ⁷¹ զմիմեանս, ժ, սմիմիեանս է. ⁷² կմեռեալսն է. յիշեաբն է. ⁷³ Զունի՛ Զայնս ... նմանեցաւ ի և յոյզով ժ, սոսվ է. ⁷⁵ Ասէ ձայն լուսայ բայց ոչ Ադամ, այլ Ղազարոս: Ասեն նմա: Ղազարոսն ո՞վ է այն, և 76 Զունի՛ ան մի եկեալ ... տեսի անդ ի և 77 Զունի՛ որպէս է. 78 փրկել ես զեբէլ, 79 ան ննէր ի ու սիրէր զիս յայժ է. ⁷⁸ Զունի՛ այսր է. ⁸⁰ և ահարեկեալ է. ⁸¹ Զունի՛ այժմ ... ցնոսա, ահա է. ⁸² հոգւայն մեռանի ի և հագուստ աշատի է. ⁸³ Զունի՛ մարմինն, ես նոյնպէս ի և 87 ունելին ի և 88 կատարեցի ի և հոգւաց ի և Զունի՛ լինել ... արծակեցի ի և չկարացի ըմրոնել, զի ծայնն է. ⁸⁵ ա՞րդ ի և

Երթ արդ եւ գգուշացիր հողոց⁹³ այլոց, եւ ես մարմնոց⁹⁴, թերեւս զնա կարաս-
ցութ բրմռնել, զի մարմին զգեցեալ է: Ասէ դժոխապետն. կարի յոյժ յերկուացեալ⁹⁵
եմ ի նմանէ, զի թէ ծայն նորա հասանելով առ մեզ⁹⁶ այնքան զօրացաւ մինչեւ զնոգին
յինչն յափշտակեաց եւ զմարմինն ի քէն, եթէ նա ինքն գայցէ՝ զինչ անցս որ⁹⁷ ոչ ան-
ցալիցէ ընդ մեզ: Զայս ամենայն ի դէպ էր հանդիպիլ ասել ցմիմեանս⁹⁸ զժոխոցն եւ
գերեզմանին:

Յուր գորակ

Իսկ մեք միմեանց զայս ծայնելով՝ եկայք այսօր զտօնս տօնսացութ ընդ Մարթայ
եւ ընդ Մարիամ, հոգով⁹⁹ եւ մարմնով ուրախացութ, եւ որք թաղեալքս եմք ի գործն
մեղաց, ընդ Դավարու այս օր ապաշխարութեամբ ի վեր յարիցութ, եւ նեխեալքս ի
տիկմն յանցանաց՝ ընդ չորեքօրեայ նեխեալն նորոգեացութ:

Փոխանակ ի թեղանիա գնալոյ յեկելեցիս ընթասցութ, փոխանակ կենդանի ծայ-
նից առաքելոցն՝ ծայնի աւետարանչին¹⁰⁰ լուիցութ, ընդ Թումայի ասելով. օն, եկայք
զի¹⁰¹ ընդ նմա զմեղացն (յ)անդամս սպանանելով մեռցութ, զի ի զալտատեան նորա՝ ա-
ռաջի նորա արդարացեալք յարիցութ, եւ յայգուցն ծերոցն նետեւելով՝ չարեացն զոր-
ծոց տղայք երեւ նեցութ, ընդ տղայսն առաքինցեցեալք¹⁰² ծերունարար իմաստանացութ,
եւ յառաջեալք եկեղեցեացն հանդիպեացութ, փոխանակ յաւանակի¹⁰³ երկին ի յերկրի
զսեղանն տեսցութ, թողով զմարմնական զրազմունա, որպէս տղայք զսինս մարց
իւրեանց՝ զթիստոս աւրենեցութ:

Ընդ աշակերտուն զինի նորա ճնեպով¹⁰⁴ ընթասցութ, էշ եւ յաւանակ¹⁰⁵, զնոգի եւ
զմարմինս մեր, ասեմ, որք կապեալ են մեզօր արծակելով ապաշխարութեամբ առաջի
նորա ածցութ, յորոց վերայ բազմի եւ հանգչի հանեսացի: Ընդ փառաւորեալն վասն
երուսաղէմի խօսեացութ, ընդ Դաւթայ, զիեզու մեր յերգս արկեալ, ոչ ստուերօն այլ,
նշմարութեամբ. ասացութ. ի թրանոց մանկանց տղայց հաստատեցի աւրինու-
թիւն քեզ: Ընդ Զաքարիայ՝ կտսերացն երուսաղէմի ուրախութիւն քարոզեացութ, եւ
ընդ Ռողովրդեանն Սիրոնի՝ Ովսաննա ի բարձունս երգեացութ: Եւ Որդուց ընդ Հօր իւ-
րում՝ հանդերձ Հոգովը¹⁰⁶ Սրբով փառաւ առաքեացութ:

(Եար. 17)

Հրատ. Ա. Յ. ՄՐՁՈՒՆԻ

93 Հոգուց ի 94 Զունի՛ և ես մարմնոց ժ 95 երկուացեալ լ. 96 քեշ լ. 97 Զունի՛ որ լ.
98 հանդիպիլ ցմիմիեան լ. 99 հոգուց ի 100 աւետարանիչն ի 101 Զունի՛ զի ժ
102 առաքինացեալք ի 103 յովանակի ի 104 ճեպելով ի 105 յովանակ ի 106 Հոգուսկ ի

